ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-ԻՆ՝ ԺԱՄԸ 11:00-ԻՆ, ԳՈՒՄԱՐՎԱԾ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

1. Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 41-րդ հոդվածի 6-րդ մասը՝

Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

1) Ազգային ժողովի պատգամավորների առնվազն մեկ քառորդի նախաձեռնությամբ 2021 թվականի ապրիլի 28-ին գումարված Ազգային ժողովի արտահերթ նիստի օրակարգում ընդգրկված նախագծերի երկրորդ ընթերցմամբ քննարկումը կազմակերպել առաջին ընթերցմամբ դրանց ընդունումից հետո՝ 24 ժամվա ընթացքում.

2) առաջին ընթերցմամբ ընդունված նախագծերի փաթեթի վերաբերյալ գրավոր առաջարկները, ինչպես նաև գլխադասային հանձնաժողովի եզրակացությունը ներկայացնելու համար սահմանել երեքական ժամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆ

2021 թվական, ապրիլի 28
Երևան

ԱԺՈ - 582 - Լ